

Սե դեռ հարց է թէ Օսմանեան կառավարութիւնը ինչպէս կվերաբերուի այդ գրութեան մէջ յայտնած զգացմունքներին:

Երկու-երեք տարի առաջ զօրապետ թաթար Օսման-փաշան փաղաքշական խօսքերով իրեն գիտող հայ պատուիրակութեան գլուխը եղող քահանայի սրտի վրայ դրեց իր ձեռքը և ասեց, Վսմանեան պետութեան հասցէին արտասանած խօսքերդ քաղցը էր, բայց այստեղ, սրտիդ խորը, ինչ օձեր ու իժեր են բնակուում:

Օսման-փաշայի այս դէպքը պէտք է լախրատ լինէր, որ հայերի ներկայացուցիչները, լինեն նրանք պաշտօնական թէ ինքնակօչ փրկիչներ:— Իրենց տեմպերամենտին չզօհէին ոչ ազգի բարեկեցութիւնը, ոչ էլ արժանապատուութիւնը:

Ինչու էր պէտք այնքան յոխորտանքը, այնքան վայնասունքը, այնքան անիրաւ ու անտեղի յափշտակութիւնը, երբ այսօր այդ բոյորի արդիւնքը պէտք է լինէր թիւրքահայերի արտագաղթը դէպի Ամերիկա, իսկ արեւմուտքից՝ Ադրիանապօլսի հայերի երեսի վրայ սողալով արած պաղատանքն ու «բերկրանքը»:

Ս. 2.

ՄԵՐ ՈՒՒՏԱՏԵՂԻՆ

(Ս. Մեսրոպի յիշատակին)

Ասում են ժամանակն է մարդկանց ծնում. հապա սւր է մեր հոգու սնանկ ժամանակի ամենամեծ պահանջ մարդարէն, որ մեզ հոգու սրբազան կրակով վառէ, որ մեր քար սրտերին շունչ ու կենդանութիւն տայ:

Չէ, չեմ ուզում հաւատալ, որ ժամանակն է ծնում մարդուն. այդ չափազանց քիչ է մարդարէ, ներշնչուած սրբազան դադափարով քարոզիչ, մտքեր կռանող եղողին հասկանալու համար:

Մարդու մտքին անհասանելի Աստուծային հանճարին հասկանալը դժուար, այն, կը համարձակուեմ ասել, անկարելի է: Նա մեծ է, այնքան մեծ, որ նրան հասկանալը նրա մեծութեան նսեմանալը կը լինէր:

Սե հէնց այդ ոգով միայն կարելի է մօտենալ մեր երանելի Մեսրոպ Մաշտոցին, մեր սրբազան նախահօրը, նրա սուրբ նշխարներին:

Կայ դէպք, կայ անձն, որին մտքով չէ, որ հասկանալու ենք, բանականութիւնը չէ, որ նրա արժէքը օրո-

չելու է. հապա և զգացմունքը իր խորը, մեծ ու անբարենելի թափով, Հոգին մարդու այդ մեծ ու անզին այժը իր խորութեամբ, իր բոլոր մասնիկներով պիտի թափ առնէ, սողողուի, համակուի մեծ, հանճարեղ անձի ոգով, որ նրան ըմբռնէ, որ նրան գնահատէ:

Այդպիսին է մեր երանելի Մեսրոպ Մաշտոցը, որին ոչ թէ բառն ու բանը, ոչ թէ ասուն ու տիպը, այլ անկեղծ, մաքուր հոգին իր բոլոր ոյժով, իր մեծ թափով միայն կըմբռնէ:

Ու այս մեծ սօնի օրերին մի կարող է նրան ըմբռնել, եթէ ոչ նրա ոգով տողորուածը, նրա մեծ, խիստ մեծ գործի վնասութեամբ տարուածը, զերուածը:

Ո՛չ մամուլը, ո՛չ գիրքը, ո՛չ արձանը նրա գործի զնահատող շին կարող լինել: Միայն կենդանի ոգին, որ մեզ պիտի տիրէ, որ մեզ պիտի շունչ տայ, մեր էութիւնը համակէ, որով մեր կեանքը պիտի զուեւարժուի ու արժէք ստանայ:

Սե ո՞վ է այժմ այս ոգին մեր մէջ քարոզում. ո՞վ է նրա մեծ յիշատակի անաւոր խորհրդով բռնուում, սրբազան շնչով տողորուում Ո՞վ է այն երկնային կայծով մաքրուած հոգին, որ մեզ ներշնչէ մեր սուրբ հօր ոգին: Յօյն տուէք այդ մարգարէին, մասնանշնչէք:

Չկայ... չկայ, թէն կարիքն ունենք, թէն նա մեզ պէտք է, թէն ժամանակն այդ է պահանջում:

Ի՞նչ են մեր յօդուածներն ու վէճերը, ինչ ողորմելի, ինչ անզոյն ու անշունչ են նրանք, այդ մի ազգի յախտեմական գոյութիւնն ապահովողի համար: Ի՞նչքան խեղճ է մեր ժամանակն ու սրբան աղքատ մեր հոգին:

Այն, ժողով, պատգամաւոր ու երկու խօսք, անձ մեր ոգու, մեր զաղափարի ամբողջ պաշարը, և այս խեղճ, այս ողորմելի արժէքներով հենք ուզում հրապարակ ելնել: այս է մեր ունեցածը, որ նուէր ենք բերում այն սեղանի առաջ, որի տակ հայ ժողովրդի մեծ մարգարէն կենդանացնողն է ամփոփուած: Սրանով ենք ուխտ դնում, ոգու տեղ միայն ձեռքայի պէս զօղանջող խօսք և դեռ էլ աւելի վատը, բանակալու... Ո՛չ, Մեսրոպ Մաշտոցի յիշատակը չեմ ուզում, իրաւունք չունիմ ամենահեռաւոր չափով իսկ արատաւորելու՝ յիշելով մեր մամուլին ու նրա մէջ բուն դրած այդ աւթի բանակալու. այդ չափից դուրս գծում, շնչին է նրա յիշատակի օրը յիշելու անգամ:

Մենք պէտք է ուխտ դնանք, սրտով ու հոգով մաքրուած, այն մեծ Ուխտատեղին, որ Օչականումն է գրանուում, ուր հայ ժողովրդի կենդանութեան սիւնն է գրանուում, ուր մեր մտքի լոյսի խորանն է ամփոփուած:

Այն սր ժողովուրդն է, որ ուզում է, հաւատում է թէ ապրելու, գործելու ու յառաջագիժմելու է և չունի Ուխտատեղի, որին տարին մի անգամ պաշտաւոր չէ զգում այնպիսի, համբուրելու սուրբ շիրմը և անաւոր Ուխտը կատարելու: Չկայ աշխարհիս երեսին հագով ապրող ազգ, որ չունենայ իր Ուխտատեղին, իր ազգային սգու դամբարանը, մաքուր, անազարտ յաւէրժ գոյութեան արժանացած սրբարանը:

Ուխտ անելը հեշտ չէ և ոչ էլ ամեն մարդու քան է: Ուխտն ահաւոր պիտի լինի ու սուրբ Ուխտը մարդու կեանքի հիմքը արուսդ խորհրդաւոր տեղն ու բազէն է: Ուխտ կարող է անել միայն օգու դաւակը, կեանքի իմաստն ըմբռնել ցանկացողը, ժողովրդի անկաշառ ու հաւատարիմ գործիչը:

Փրկիչն ինքը ուխտ արու մինչև հրապարակ դարը և բոլոր մեծ գործիչները այդ նոյն ուղիով են գնացել ու զնում են:

Հապա մեր է մեր ուրիշ ինչու Ս. Մեսրոպ Մաշտոցի գերեզմանը մեր Ուխտատեղին չէ, ինչու մեր սիրտն ու միտքն այնտեղ չենք նուիրաբերում ահաւոր երամով նրա քարոզած մեծ գաղափարին: Էլ ինչ աւելի թանգ, փոխ ու անմեռ արժէք ունինք, քան հայ տառը, մեր մտքի լոյսը: Էլ սրտեղ հայը կարող է իր ուխտն անել մեր մանակում, սրբազան ուխտը, քան Ս. Մեսրոպի շիրիմի առջի:

Ոչ թէ այս տարի, այլ ամեն տարի ամեն մի հայի պարտքն է, եթէ նա ուղում է, եթէ նա զգում է ու բռնում է, որ իբրև հայ ու մարդ պիտի ապրէ, գործէ, գնայ այդ խնկիկի շիրիմին Ուխտ:

Մեր ազգային Մեծ Յօրհիւանի տօնը թող ամեն հայի համար ահաւոր երգման մեծ տօնը դառնայ մեր ազգային մեծ Ուխտատեղին գնայ ու երդուել, ուխտել— հաւատարիմ մնալ Ս. Մեսրոպի վեհ գաղափարին: Անա մեր միակ միջոցը յաւերժացնելու այս մեծ տօնը, մեր սուրբ հօր անգին յիշատակը:

Գնանք, ուխտ գնանք աշխարհիս ամեն ծայրից, ամեն անկյունից, սրտով ուխտ գնանք ու մեր ահաւոր երդում-ուխտը տանք:

Օշականուսն է գտնուում մեր մեծ Ուխտատեղին:

Pessimist

ՀԱՄԱԶՐԳԱՅԻՆ ԻՄԵՐ ԵՒ ԱՆՉՈՒԳԱԿԱՆ ՏՕՆԱ-ԽՄԲՈՒԹԻՒՆ

(Հայ գրերի գիտի 1500-ամեակի և տպագրութեան գիտի 400-ամեակ)

Այսօր հոկ. 12-ին, Ս. Թարգմանչաց տօնին օտանաւած կարգով կատարուած են համազգային մեծ ու տեղուդական յօրհիւանները: Աշխարասփիւս հայերի սիրտը այս մեծ և խորհրդաւոր տօնին լցուած պիտի լինի անհուն քերկրանքով ու անասելի խանդավառութեամբ, նրա միտքն ու հայեացքը սեւեւած պիտի լինի Վաղարշապատից 2 ժամ հեռաւորութեամբ գտնուող Օշական գիւղը, որի եկեղեցու բնակ տակ հանգչում են հինգերորդ դարու ամենամաննարեղ մեծ մարդու, հայ գրերի զրտիչ Ս. Մեսրոպ Մաշտոցի խնկիկի նշխարները:

Հինգերորդ դարու սկզբին, փրկչական 412-ին հայ կեանքը մտաւ մի նոր տարիչջան. այդ տարիչջանը սկիզբը տուեց հայի կուլտուրական տան կեանքին, նրա

ազգային գիտակցութեան, նրա ցեղական բնազդի զօրեղ տրտայայտութեան, նրա առանձնացած կեանքի օգակի լուն:

Մինչև հայ գրերի գիւտը հայի ամբողջական զոյութիւնը, որպէս գիտակից ազգի՝ զուրկ սեպհական գրերից ու լիզուից,—եթեակայ էր պատահականութեան, փորձանքի ու անգամ անհետանալուն:

Այդ փորձանքից փրկից հայութիւնը Տարօն գաւառի (այժմ Մուշի) Հայեկաց (Մաշտոց) գիւղի գաւակը— Ս. Մեսրոպ Մաշտոցը՝ Վառձապուհ (Արշակունեաց) հայոց թագաւորի և Սահակ Պարթև կաթողիկոսի օրերով հինգերորդ դարու սկզբին:

Այս գիւտի պատմութիւնը յետագայ սերունդները իմացան Ս. Մեսրոպի անմիջական աշակերտ Եօրհիւ-Սքանչելու, Մովսէս Խորենացու և նրա Աղան աշակերտի մօտ աշակերտաց Ղազար-Փարպեցու աղբիւրներից:

Քրիստոնէութիւնը տարածուելով Հայաստանում ա. Մեսրոպի համար երկար որոնումների, հետապնդումների, ուսումնասիրութիւնների անարկայ դարձաւ հայ սեփական գրերի գիւտի խնդիրը: Նա թողեց պալատական կեանքը և ձգնում էր տարիներով հասնել իր փափագին: Նա ուսումնասիրում էր լեզուները և խորհրդակցում գիտնականների հետ: Վերջապէս Լյուիվանոսի աշակերտ գիտնական Լոպիանոսի աջակցութեամբ. նա, մէկ օր, իր ստեղծագործական ոգեչնչումների մօմնևտին տեսաւ անյայտ համարուած ձևերը, որը գրում էր քարի վրայ նրա փափագած այբուբէնը:

Կար, յիբաւի, այսպէս անուանած շնախնական հայ այբուբէնը աւորի Դանիէլ Եպիսկոպոսի հնարած, սակայն այդ այբուբէնը, ինչպէս հաստատեցին մտանագէտները, պարունակում էին օտար լեզուի տառեր, որոնք գործածութիւնից զուրս էին զցուած:

Ս. Մեսրոպը գտաւ բուն հայկական գրերը՝ բնտանի ու համապատասխան հային անհատական հոգուն, իր խկատիպ, առանձնայատուկ եռանդներով ու նրբերանգներով, իր յատուկ կազմով, առողանութեամբ ու ցայտուն յատկանշաններով:

Ենարհիւ Հայաստանի աշխարհագրական յեռնտա գիրքի ու կիմայական տարբերութիւնների, հայ այբուբէնը իր ծնունդով ու ստեղծագործութեամբ աւելի ճոխ ու բազմանշիւն է ուրիշ շատ ազգերի այբուբէնից: Ամեն մի հնչիւն, ամեն մի տառ պակսեանական մի լեզու պիտի լինի հայութեան համար, պաշտպատուների անարկայ, արբութիւն սրբոց:

Մինչև սեպհական գրերի գիւտը հայերը իրենց պաշտօնական թղթերը ու այլ գրագրութիւնները կատարում էին օտար լեզուներով՝ յոյն, ասորի, պարսիկ, սեփական գրերի գիւտը վերջ դրեց այդ մուրացկանութեան:

Ետտ մեծ էր այդ գիտի յայտնութիւնը. ցնցերգով ու անհուն ուրախութեամբ Վաղարշապատի մօտ գիմաւորեցին հանձարեղ Գտիչ Ս. Մեսրոպին՝ թագաւոր, կաթողիկոս, իշխաններ, աւագանիք և ժողովուրդ ու հանդի-